

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի հունվարի 29-ին
Պետական գրանցման համարը 3001521



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 8 -Ն

ք.Ստեփանակերտ

**ՀԱՇՎԱՌՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ ԸՆՏՐՈՂԻ ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ՀԱՇՎԱՌՈՒՄ ՉՈՒՆԵՑՈՂ
ԸՆՏՐՈՂԻՆ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՏԵՂԵԿԱՆՔԻ
ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ 34/121
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱՏ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասին
և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ
հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական
ընտրական հանձնաժողովը **որոշում է**

1. Սահմանել՝

1) հաշվառում չունեցող ընտրողի՝ համապետական ընտրությունների ժամանակ
ընտրողների ցուցակում ընդգրկվելու դիմումի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հաշվառում չունեցող ընտրողին համապետական ընտրությունների ժամանակ
ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու տեղեկանքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական
ընտրական հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 23-ի «Ընտրելու իրավունք ունեցող և
հաշվառում չունեցող քաղաքացիներին ընտրողների ցուցակներում ընդգրկվելու կարգը
սահմանելու մասին» թիվ 34/121 որոշումը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ ՎԱՐՈՂ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ

ԴԻՄՈՒՄ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ

Ես՝ _____

անուն, հայրանուն, ազգանուն

Անձնագիր՝ _____, տրված՝ _____

սերիա, համար

ամսաթիվ և ում կողմից

Բնակվում եմ _____

բնակության վայր

և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառում չունեմ:

Համապետական ընտրություններին մասնակցելու համար խնդրում եմ ինձ ընդգրկել իմ գտնվելու վայրի մոտակա ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում և այդ մասին տալ համապատասխան տեղեկանք:

Դիմող՝ _____

ստորագրություն

« _____ » _____ 20 թ.

Դիմումի ձևը տրամադրում է լիազոր մարմինը:

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

Հավելված N 2
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողովի
2015 թվականի հունվարի 28-ի N 8-Ն որոշման

N _____
« _____ » _____ 20 թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. _____
անուն, հայրանուն, ազգանուն

Անձնագիր՝ _____, տրված՝ _____
սերիա, համար ամսաթիվ և ում կողմից

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հաշվառում չունի, ընդգրկվել է
_____ համայնքի թիվ _____ ընտրական տեղամասի ընտրողների

լրացուցիչ ցուցակում:

լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման
ղեկավարի անուն, ազգանուն

ստորագրություն

Կ.Տ.

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ